Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 18-Ի ԹԻՎ ԹԻՎ 1-Ա, 2-Ն, 3-Ն, 4-Ա, 6-Ա ԵՎ 7-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 1-Ա որոշման վերնագրում «2020» թիվը փոխարինել «2021» թվով:

Թիվ 2-Ն որոշումը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի դրույթներին, համաձայն որոնց՝ նորմատիվ իրավական ակտում փոփոխությունները կատարվում են նրա առանձին՝

- բառեր, թվեր կամ կետադրական նշաններ այլ բառերով, թվերով կամ կետադրական նշաններով փոխարինելու միջոցով.
- բառեր, թվեր կամ նախադասություններ հանելու միջոցով.
- բաժիններ, գլուխներ, հոդվածներ, մասեր, կետեր, ենթակետեր, պարբերություններ կամ նախադասություններ նոր խմբագրությամբ շարադրելու միջոցով.
- բաժինների, գլուխների, հոդվածների, մասերի, կետերի, ենթակետերի կամ պարբերությունների գործողությունը դադարեցնելու միջոցով:

Թիվ 3-Ն որոշմամբ հաստատվել է համայնքի 2020 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը: Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 7-րդ մասի՝ մինչև հաշվետու բյուջետային տարվան հաջորդող տարվա մարտի 1-ը բյուջեի կատարման տարեկան հաշվետվության հետ համայնքի ղեկավարը համայնքի ավագանուն է ներկայացնում հաշվետու տարում հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվություն, որը ենթակա է հրապարակման՝ օրենքով սահմանված կարգով: Սակայն համայնքի ավագանու հաստատմանը ներկայացվել է միայն համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը:

Անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով մինչև ս/թ մարտի 1-ը համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնել նաև համայնքի հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ 2020 թվականի հաշվետվությունը:

Թիվ 4-Ա որոշման դրույթների համարակալումը սխալ է գրառված:

Թիվ 6-Ա որոշման նախաբանում հղումը սխալ է կատարված: Այսինքն, ՀՀ կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի «Անհատույց պետական ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին» N947-Ն որոշման 1-ին կետի «1.1» ենթակետի համաձայն՝ նշված որոշման դրույթները տարածվում են մինչև ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի՝ հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների բնակարանային ապահովության կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի N 947-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» N 1016-Ն որոշումն ուժի մեջ մտնելու օրը ծագած հարաբերությունների վրա: Անհրաժեշտ է բնակարանային պայմանների կարիքավոր զոհված (մահացած) զինծառայողների և հաշմանդամություն ունեցող զինծառայողների ընտանիքների հաշվառումն իրականացնել ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N1016-Ն և 2018 թվականի դեկտեմբերի 6-ի N1419-Ն որոշումներով հաստատված կարգերին համապատասխան:

Որոշման 2-րդ կետը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասին, համաձայն որի՝ անհատական իրավական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին այն անձանց առձեռն կամ օրենքով սահմանված այլ կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից, որոնց ուղղված է ակտը:

Թիվ 7-Ա որոշման դրույթների համարակալումը սխալ է գրառված:

Կատարող՝ Նաիրա Մարտիրոսյան
16.02.2021թ.